

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 37/2

22 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Էլեկտա-Էլլոա» ՍՊԸ-ի 24.08.2015 թ-ի վարչական բողոքը ՀՀ ֆինանսների նախարարի ժամանակավոր պաշտոնակատարի 20.08.2015 թ-ի թիվ 003406 որոշման դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 10.07.2015թ.-ի թիվ 5104136 հանձնարարագրի համաձայն «Էլեկտա-Էլլոա» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ 06.08.2015 թ-ի թիվ 5104136 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով արձանագրվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների խախտման փաստ: Արդյունքում, ղեկավարվելով «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի և «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի դրոյթներով ՀՀ ֆինանսների նախարարի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից 20.08.2015 թ-ին կայացվել է գործունեության կասեցման մասին թիվ 003406 որոշումը:

Ընկերությունը համաձայն չլինելով Ակտի հետ հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան Ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Համաձայն ՀՀ վարչական դատարանի 17.08.2015 թ-ի որոշման ընկերության հայցադիմումն ընդունվել է վարույթ: Նշված որոշումը ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ է մուտք եղել 21.08.2015 թ-ին: Այսինքն, ՀՀ ֆինանսների նախարարի ժամանակավոր պաշտոնակատարի թիվ 003406 որոշումը կայացնելիս, այն է՝ 20.08.2015 թ-ին, վարչական մարմինը դեռևս տեղեկացված չի եղել ՀՀ վարչական դատարանի 17.08.2015 թ-ի հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշման մասին: Ընդ որում հարկ է նշել, որ ՀՀ վարչական դատարանի որոշման մասին տեղեկանալուց հետո ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ-ն ձեռնպահ է մնացել ՀՀ ֆինանսների նախարարի ժամանակավոր պաշտոնակատարի 20.08.2015 թ-ի թիվ 003406 որոշման պահանջների կատարումից:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը»:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարի ժամանակավոր պաշտոնակատարի 20.08.2015 թ-ի թիվ 003406 որոշման կատարումը ենթակա է հետաձգման, մինչև ՎԴ/3785/05/15 վարչական գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝

ՀՀ ֆինանսների նախարարի ժամանակավոր պաշտոնակատարի 20.08.2015 թ-ի թիվ 003406 որոշման կատարումը հետաձգել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ